հուրն այն՝ որ ի չարախառնութեանց օդոց գոյացեալ ուռուցիկն խեղդիչ զոր կոչեն բարի՝ ցասումն յԱրարչէն անդ որ ի Ֆիլիպէ բաց յայլազգացն բնակչաց, զպանդխտելոցն որ յերկիր օտար, զնոր ժողովելոցն զժողովուրդն զամենեցուն զխոցեալ սիրտս դառնագոյն ևս հրով դարձեալ խոցոտեաց. քանզի եբաց զծածկեալն հուր և նաւթիւ և հիւթով և ճարպով սնոյց և զանթեղեալն կրակ վառեալ նոր նորոգութեամբ հրդեհեաց. զի ոչ եթէ միայն ի մատաղագոյն մանկանց և ի ստնդիեցաց և ի պատանեկաց, այլ և յազնուականացն և ի տանուտերաց և ի սարկաւագացն էին, որք անծանօթ աշխարհի՝ անծանօթ ցաւօքն տագնապեալք ի տարաժամ մահուն լքան ի սիրելեաց հեծեծանօք։ Զի սպառեալք էին յուժոյ՝ ի տխրութեանց եկելոց, և ոչ կարէին ևս լալ. զի ահաբեկեալ էին ընդ նորին պէս պէս փորձութիւնսն և ոչ անգամ ևս ողբալ կարէին, քանզի ամենևիմբ ոչ բխէր ցօղ ի ցընցուղ սրտից զի կարծրացեալ էր որպէս զապառաժ քարս անբերս։ . . . . . .

. . . . . Եւ աստանօր դարձեալ Ամենակարողն արար պատճառ մխիթարելոյ ըզվշտանգեալ ժողովուրդն, զվերոյիշեալ զայրն ազնուական, զպարոն Զելեպի Աբրահամ. զի գնացեալ էին ի տանուտերաց ի դուռն արքունի խնդրել ի նախարարաց թագաւորաց զտուն մի աղօթից. և Աբրահամ Զելեպին ըստ յառաջնումն նուագի գորովոյն արգահատեալ զտանուտերս և քաջալերեալ ծանուցանել բռնակալաց, ցուցեալ զճանապարհս դրանց բարեբարոյից մեծամեծացն և զկերպս հայցուածոց հանգամանաց, զրել տայր զարգուհալս և երբեմն դեգերէր ի բարեխօսութիւն իրին կատարելոյ բաղձանօք։ Քանզի որ փափաքէրն՝ ասելով ըստ Դաւթի ընդ կատարման չինուածոյն անդ գնալ, թէ մտից ի տուն քո պատարագօք և տաց քեզ զուխտ իմ զոր խոստացայ և ճաշակել փափաքէր ի ծառոյն ստացելոյ յեօթնեկի անմահարար պտղոցն և ցնծալ ի լոյս ճրագին եօթնարփենի զոր թագնեաց բլուրն կնդրկի յարկն .... զցուցեալն ի Սողոմոնէ, ուր զենանի եղն պարարակ Հօր ի հաճութիւն, զենեալ պատարագելոցն անծախապէս ծարաւեալն և քաղցեալն, դիմեալ փափաքէր յարբումն և ի ճաշակումն անմահականացն յաւիտենականաց, յիշատակելով և զհայրն հանգուցեալ անդ որ ի Ֆիլիպէ ի հարսնարանն զոր առնելոցն էր հրճուեցուցանել ընդ ամենայն նախնեաց իւրեանց։

Մինչդեռ ինքն նկատէր մտախոհ իմաստութեամբ անգարդացեալ զտունն, տգեղացեալ ի գուարթութենէ, մերկացեալ ի փառաց, տխրեալ մանկանց ձեռս ի ծնօտի կալեալ, աղախնեաց ձեռս զմիջօք, այլայլեալ կերպարանացն սպասաւորաց ափիբերան կանգնելով ի տարակուսանս վարեալ, բարեկամաց պչուցեալ դիմօք լռիկ նստէին. իսկ մայրն խոհեմացեալ փղձկեալ սրտիւ զանհանդուրժելին զվտանգ ոչ կարացեալ տանել ողբերգական ձայնիւ և դառն արտասուօք սկսաւ ասել առ որդին. Ուր է լուսինն մեր զի ըմբռնեցաւ, ուր է արեգակն մեր զի խաւարեցաւ. ուր է վրանն փառաց մեր զի փեռեկեցաւ. ուր է թագ և պարծանք մեր զի խլեցան. ուր է տանուտէրն ազնուական զի ի մէնջ պակասեցաւ. ուր է որդեակ իմ, պատուականն այր՝ հայր քո զի ի մէնջ յանդառնալին ուղևորեցաւ. և երգս առեալ սոցին նմանեօք զարժանին զայն ողբոց լային, յիշատակելով զերախտիսն և զմեծութիւն։ Եւ ընթացեալ անդ հասին եպիսկոպոսք և վարդապետք և քահանայք և տանուտերք գրեալքն ըստ ժամանակին. ամենայն ոք ըստ կարի մատուցանէին նոցա զսփոփական բանս, զոհաբանականս առ բարերարն Աստուած մխիթարութեանց սրտից վհատելոց ընծայէին։

Իսկ մեք յայսմ վտանգի քանիցս դառնացաք առաւելագոյն քան զնոսա զի ոչ ևս հասաք յետին ողջունի նորա և ոչ ևս զմեզ ոք մխիթարութեան ետես արժանի, օտարս համարելով ըստ կարծեաց. բայց մեք կորուսաք զվաղեմի գորովագութն մեր. տարագրեցաք իբրև ի հարազատութեան, լքաւ քաղցրալուրն որ արգահատէրն զմեզ որպէս զորդիսն։ Վասն որոյ և ողբասցուք ըստ ողբերգող տեսողին որ ի հնումն որոյ անուանակոչութեան պատմող ճառիս թէ որբ մնացաք և ոչ զոյ մեր հայր. մարք մեր այրիք ի ժամանակաց մերոց այլովք հանդերձ և ընթասցուք ոճովն առաջնով յաւարտումն իբրև պատմաբանութիւն աստուածասիրացդ ունկնդրաց։

Քանզի իբրև լուր եղև գալուստ առ ամենեսեան Մաթէոս Զելեպու որ յԱղբիանուպոլիս, զմխիթարական գիրս արձակէին ըստ արժանեաց ևս առաւել քահանայքն աստուածարեալք, տանուտերքն իմաստազարդք, դեսպանս արձակեալ հանդերձ սփոփական նամակօք առ Մաթէոս Զելեպին, պատկանալիր և յօդաւոր բանիւք յիշելով զերախտիս բարեկամին իւրեանց հօր նորա ըստ Սողոմոնի վասն լման չինութեան եկեղեցւոյն։ Զոր իբրև ետես զեկեալս՝ Մաթէոս Զելեպին, որքանեաւ ի բազմիցն մխիթարեալ